**Նոտարական ակտի կոդ:** 449-20180312-37-2305689
**Նոտարական ակտի գաղտնագիր:** SRJBAS

# Ոչ բնակելի տարածքի վարձակալության Պայմանագիր

ՀՀ ք. Երևան Երկու հազար տասնութ թվականի մարտի տասներեքին

,,ՀԱՅՁՐՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ,, Փակ Բաժնետիրական Ընկերությունը, գրանցման համար՝264.120.06268, գրանցման ամսաթիվ՝ 30/04/2003թ. գտնվելու վայրը՝ Վաղարշյան 12, Արաբկիր 0012 Երևան Հայաստան, ի դեմս տնօրեն՝ ՀՀ քաղաքացի **ԱՐՇԱՎԻՐ ՌԱՖԻԿԻ ՄԱՐՏԻԿՅԱՆԸ**, ծնված՝05/10/1965թ-ին, ՀԾՀ՝1510650279, անձնագիր՝ AK0627531, տրված՝011-ի կողմից, 01/10/2010թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., 26 Շ, 10ԲՆ այսուհետ՝ Վարձատու, մի կողմից և ՀՀ ,,ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ,, պետական կառավարչական հիմնարկը, գրանցման համար՝ 286.180.06766, գրանցման ամսաթիվ՝ 01/02/2008թ., գտնվելու վայրը՝Նալբանդյան 13 Երևան 0010 Հայաստան, ի դեմս Ծառայության աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, համաձայն 12/03/2018թ. տրված թիվ ՄՄ/ՀռՄ/6482-18 լիազորագրի հանդես է գալիս Ծառայության աշխատակազմի Արաբկիր սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ **ԱՍՅԱ ԱՇՈՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ**, ծնված՝ 21/11/1972թ-ին, ՀԾՀ՝ 7111720067, անձնագիր՝ AN0247051, տրված՝ 013-ի կողմից, 07/11/2012թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԴԱՎԹԱՇԵՆ, ԴԱՎԻԹԱՇԵՆ 4 ԹՂՄ., 21 Շ, 48ԲՆ ), այսուհետ՝ Վարձակալ, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ քաղաք Երևան, Վ. Վաղարշյան փողոց, 12 /տասներկու/ շենք, 1 /մեկ/ շինություն հասցեի 3-րդ/ երրորդ/ հարկից ըստ հատակագծի թիվ 1- 47,7 քմ, թիվ 2-30,7 քմ, թիվ 3-35,6 քմ, թիվ 4-30,3 քմ և թիվ 5-17,3 քմ մակերեսներով տարածքները՝ 161,6 /հարյուր վաթսունմեկ ամբողջ վեց/ քմ ընդհանուր մակերեսով, (հատակագիծը կցվում է): Վարձակալի կանոնադրական խնդիրներից բխող աշխատանքային գործունեության իրականացման համար, այսուհետ օբյեկտ:

1.2 Օբյեկտի հանձնումը ձևակերպվելու է հանձման-ընդունման ակտով 13/03/2018թ.

1.3 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է վարձատուին (սեփականության վկայական N 2133214, տրված՝ 20/02/2006թ.՝ Անշարժ գույքի պետական կոմիտեի կադաստրի Արաբկիր տարածքային ստորաբաժանման կողմից):

1.4.Վարձատուն երաշխավորում է, որ Գույքը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ երրորդ անձանց իրավունքներով, վեճի առարկա չէ և արգելանքի տակ չի գտնվում, ինչը հաստատվում է նաև Անշարժ գույքի պետական կոմիտեի կադաստրի Երևանի տարածքային ստորաբաժանման Արաբկիր թիվ 2 գրասենյակի կողմից տրված 07/03/2018թ. N US-07032018-01-0408 միասնական տեղեկանքով:
1.5 Վարձակալության հանձնված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի՝ հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն պայմանագիրը կնքվում է մինչև 25.12.2018թ. /երկու հազար տասնութ թվականը դեկտեմբերի քսանհինգը/ ժամկետով:

## 3. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի ամսական վարձավճարը կազմում է 290 000 (երկու հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ գումար, ներառյալ բոլոր ծախսերը և հարկերը:

3.2 Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը՝ Վարձակալը Վարձատուին է վճարում ամսական կտրվածքով՝ մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 20-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:
3.3 Վարձակալը վարձավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է երկկողմ հաստատված հանձման-ընդունման արձանագրության և էլեկտրոնային համակարգով դուրս գրված հաշվարկային փաստաթղթի հիման վրա:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Վարձատուն պարտավոր է՝

4.1.1 Վարձակալին նախազգուշացնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին,
4.1.2 Վարձակալած տարածքում ապահովել կոմունալ համակարգերի անխափանությունը, իսկ իր մեղքով առաջացած թերությունների դեպքում, վերացնել դրանք ոչ ուշ քան 2 աշխատանքային օրվա ընթացքում:

4.1.3 Ոչ ուշ, քան երեք ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Օբյեկտն ազատելու անհրաժեշտության մասին:

4.2 Վարձատուն իրավունք ունի՝
4.2.1 Վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Վարձակալն էականորեն վատթարացրել է Օբյեկտի վիճակը, սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված կարգով, չափով և ժամկետներում չի վճարել վարձավճարը:

4.2.2 Վարձատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ երեք ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձակալին:

4.3 Վարձակալը պարտավոր է՝

4.3.1 Ժամանակին վճարել Օբյեկտն օգտագործելու համար պայմանագրով նախատեսված վարձավճարը:

4.3.2 Ապահովել Օբյեկտի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը:

4.4 Վարձակալը իրավունք ունի՝

4.4.1 Եթե Վարձատուն Վարձակալին հանձնել է սույն պայմանագրի 1.1 կետին

չհամապատասխանող Օբյեկտ, պահանջել հանձնելու համապատասխան Օբյեկտ կամ հրաժարվել հանձնված Օբյեկտից, իսկ եթե Օբյեկտի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը,

4.4.2 Օբյեկտը հանձնել ենթավարձակալության միայն Վարձատուի գրավոր համաձայնության դեպքում.

4.4.3 Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու Օբյեկտին վերաբերող փաստաթղթերը:

4.4.4. Վարձակալը իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ երեք ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձատուին:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 %-ի (զրո ամբողջ հինգ տասնորդական տոկոսի) չափով:

5.2 Սույն պայմանագրով նախատեսված Օբյեկտի հանձնման ժամկետը խախտելու դեպքում Վարձակալը իրավունք ունի Վարձատուին ներկայացված գրավոր ծանուցմամբ պահանջելու վճարել յուրաքանչյուր ուշացված օրվա համար տույժ՝ պայմանագրի գնի 0.05 %-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական տոկոսի) չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից:

5.4 Վարձակալի կողմից սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Վարձատուն իրավունք ունի Վարձակալին ներկայացված գրավոր ծանուցմամբ պահանջելու վճարել յուրաքանչյուր ուշացված օրվա համար տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական տոկոսի) չափով:

5.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.7 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ Վարձատուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Վարձակալը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Կողմերը չեն կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով մյուս Կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

## 6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները, ինչպես նաև նոր ստեղծվող միասնական ընդունարանները, պետական կամ համայնքային սեփականություն

հանդիսացող շենքերում և շինություններում տեղակայելուն ուղղված միջոցառումների արդյունքում ,,Ոչ բնակելի տարածքի վարձակալության,, պայմանագրով վարձակալության հանձնված տարածքում աշխատանքային գործունեություն. իրականացնող Ծառայության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ տարածք տեղակայման դեպքում, պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման՝ ցանկացած ժամանակ:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

## 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Սույն պայմանագրի շրջանակներում ցանկացած ծանուցումները և փաստաթղթերի հանձնումը կարող է կատարվել Կողմերի ընտրությամբ առձեռն հանձնելու կամ փոստային ծառայության միջոցով սույն պայմանագրով սահմանված հասցեին պատվիրված նամակ ուղարկելու միջոցով: Ընդ որում, եթե, փաստաթղթի հանձնումը կատարվել է փոստային ծառայության միջոցով՝ սույն պայմանագրով Կողմին հայտնի վերջին հասցեին, այն համարվում է ստացված, իսկ ծանուցման պարտավորությունը՝ պատշաճ կատարված, դրա ուղարկման օրվանից 7-րդ աշխատանքային օրը՝ անկախ դրա փաստացի ստացման հանգամանքից:

8.2 Համաձայն ՀՀ քաղ օր-ի 611 հոդ. սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 /երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում:

8.3 Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումներն օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր, վավերացված են Նոտարի կողմից և գրանցված են Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

8.4 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն, չորս օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է համապատասխան Նոտարական տարածքի նոտարական գործում, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ մյուս օրինակը տրվում է ներկայացնելու Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում:

8.5 Նոտարի ներկայությամբ պայմանագիրը ստորագրող կողմերը հայտարարեցին, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում պայմանագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ պայմանագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:

8.6 Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի, ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.7 Սույն պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է Նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

**9. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները**

Վարձատու ,,ՀԱՅՋՐՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ,, Փակ Բաժնետիրական Ընկերության տնօրեն

Վարձակալ

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն
ք.Երևան Նալբանդյան 13
Հ/Հ 900011556355
ՀՎՀՀ 02505511
Լիազորված անձ

Երկու հազար տասնութ թվականի մարտի տասներեքին
Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Երևանի Արաբկիր նոտարական տարածքի նոտար **ՎԵՐԱ ԱԲԱՋՅԱՆԻՍ** կողմից: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, անշարժ գույքի նկատմամբ ,,ՀԱՅՋՐՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ,, Փակ Բաժնետիրական Ընկերության իրավունքները, լիազորված անձի լիազորությունները, իրավաբանական անձանց իրավունակությունը, ստուգված են: Համաձայն ՀՀ քաղ. ՕՐ-ի 611 հոդվածի սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 /երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում:

Գրանցված է գրանցամատյանում 748

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վերա Խաչիկի Աբաջյան

3-րդ հարկ



հարկ 4




Ընդունող / Հանձնող

«ՀԱՅՋՐՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

РА ЗАО "АЙДЖРНАХАГИЦ ИНСТИТУТ"
Армения, Ереван 375012, ул. В. Вагаршяна 12
Երևան 375012, Վ. Վաղարշյան փող. 12
"HAYJRNAKHAGITS INSTITUTE" CJSC RA
V. Vagharshian st. 12, Yerevan 375012,Armenia

☎ 27-36-60
Fax 22-15-85
E-mail: awd@hjni.am
http://www.hjni.am/

Տնօրեն Արշավիր Մարտիկյան

ՀՎՀՀ 00012859

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

h/h 11500 00088680300

...րական ակտի կոդ: 449-20181122-37-3252395
...արական ակտի գաղտնագիր: GNYE53

## Համաձայնագիր Վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին

ՀՀ ք. Երևան. Երկու հազար տասնութ թվականի նոյեմբերի քսաներեքին

Մենք` **,,ՀԱՅՋՐՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ,,** ՓԲԸ-ն (գրանցման համար` 264.120.06268, տրված 30/04/2003թ., գտնվելու վայրը` ք.Երևան, Վ.Վաղարշյան 12), ի դեմս` տնօրեն **ԱՐՇԱՎԻՐ ՌԱՇԻԴԻ ՄԱՐՏԻԿՅԱՆԻ**, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, ում անունից համաձայն 21.11.2018թ. տրված թիվ 09 լրազորագրի, հանդես է գալիս **ՍՈՒՐԵՆ ԷԴՎԱՐԴԻ ՂԱԶԱՐՅԱՆԸ** (ծնված` 23/05/1985թ.-ին, ՀԾՀ` 3905850478, անձնագրային տվյալներ` AP0611734, տրված 001-ի կողմից, 31/10/2016թ.-ին, հաշվառված` ՀՀ, Կոտայքի մարզ, Մրգաշեն 6-րդ փ., 60 տուն հասցեում), այսուհետ` Վարձատու, մի կողմից, և ՀՀ **,,ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ,,** պետական կառավարչական հիմնարկը (գրանցման համար` 286.180.06766, գրանցման ամսաթիվ` 01/02/2018թ., գտնվելու վայրը` Նալբանդյան 13, Երևան 0010 Հայաստան), ի դեմս` Ծառայության գլխավոր քարտուղար Վ. Բաբաջանյանի, համաձայն` 27/09/2018թ. տրված թիվ ՎԲ/ՀուԱ/23661-18 լիազորագրի հանդես է գալիս Ծառայության աշխատակազմի Արաբկիր սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ **ԱՍՅԱ ԱՇՈՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ**, ծնված` 21/11/1972թ.-ին, ՀԾՀ` 7111720067, Անձնագրային տվյալներ` AN0247051, տրված` 013-ի կողմից, 07/11/2012թ.-ին, հաշվառված` ԵՐԵՎԱՆ, ԴԱՎԹԱՇԵՆ 4 ԹՂՄ., 21Շ, 48ԲՆ), այսուհետ` Վարձակալ, մյուս կողմից, կնքեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

Կնքեցինք ցույն համձայնագիրը հետևյալի մասին.

1. Կողմերիս միջև 13/03/2018թ. կնքված Երևան նոտարական տարածքի նոտար` Վերա Աբաջյանի կողմից գրանցամատյանի թիվ 748 համարով վավերացված վարձակալության պայմանագրի /վարձակալության իրավունքի գրանցման վկայական N 30032018-01-0257, տրվ. 30/03/2018թ./ 2.1. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

,,Սույն պայմանագիրը կնքվում է մինչև 25/12/2019թ. ժամկետով:

2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից:

3. Համաձայնագրի կնքման հետ կապված ծախսերը կատարված է վարձակալի կողմից:

4. Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է չորս օրինակից, որոնցից մեկ օրինակը պահվում է Երևան նոտարական տարածքի նոտարական գրասենյակում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

5. Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան ստորաբաժանումում 30 /երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում:

Ստորագրություններ

**,,ՀԱՅՋՐՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ,, ՓԲԸ**

լիազորված անձ ---------------------------------------------------------------------------

**,,ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ,,**

լիազորված անձ---------------------------------------------------------------------------

Երկու հազար տասնութ թվականի նոյեմբերի քսաներեքին
Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Երևանի նոտարական տարածքի նոտար **ՎերաԱբաջյանիս** կողմից:
Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ, կողմերի ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորությունները ստուգված են:
Գրանցված է գրանցամատյանում 4484

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վերա Խաչիկի Աբաջյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «13» Դեկտեմբերի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԿՄ

### 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Արաբկիր Վ. Վաղարշյան փողոց 12 շենք, 1 տարածք

### 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր 13.03.2018թ h - 748, Համաձայնագիր 23/11/2018թ-ի N 4484

### 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/h | Կադաստրային ծածկագիրը | Տեսակը | Մակերեսի չափը | Գրանցված իրավունքի տեսակը |
|---|---|---|---|---|
| 1 | 01-003-0118-0056-001-014 | Տարածք | 161.6 ք.մ. | ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

*Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ*

Պայմանագիրը գործում է մինչև 25.12.2019թ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Խաչատուր Վարդանյան

զբաղեցրած պաշտոնը՝ Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.

**Նոտարական ակտի կոդ:** 449-20191224-83-4386202
**Նոտարական ակտի գաղտնագիր:** XNW7TX

## Համաձայնագիր Վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ՀՀ ք. Երևան. Երկու հազար տասնիննը թվականի դեկտեմբերի քսանչորսին

Մենք՝ **,,ՀԱՅՋՐՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ,,** ՓԲԸ-ն (գրանցման համար՝ 264.120.06268, տրված 30/04/2003թ., գտնվելու վայրը՝ ք.Երևան, Վ.Վաղարշյան 12), ի դեմս՝ տնօրեն **ՅՈՒՐԻԿ ԼԵՎՈՆԻ ՋԱՎԱԴՅԱՆԻ**, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, ում անունից համաձայն 17/12/2019թ. տրված թիվ 26/19 լիազորագրի, հանդես է գալիս **ԷԴՈՒԱՐԴ ԼԵՆԴՐՈՒՇԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ** (ծնված՝ 06/09/1958թ-ին, ՀԾՀ՝ 1609580133, անձնագիր՝ AM0776710, տրված՝ 011-ի կողմից, 27/06/2012թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ., 43 Շ, 29ԲՆ) այսուհետ՝ Վարձատու, մի կողմից, և ՀՀ **,,ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ,,** պետական մարմինը (գրանցման համար՝ 286.184.1024769, գրանցման ամսաթիվ՝ 27/06/2018թ., գտնվելու վայրը՝ Նալբանդյան 13, Երևան 0010 Հայաստան), ի դեմս՝ Ծառայության գլխավոր քարտուղար Հ.Գևորգյանի /իրավանախորդ՝ "ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ" Պետական Կառավարչական հիմնարկ, գրանցման համար՝ 286.180.06766, ամսաթիվ՝ 01/02/2008, գտնվեկու վայրը՝ Երևան, Նալբանդյան 13/, համաձայն՝ 23/12/2019թ. տրված թիվ 02/12-1/29978-2019 լիազորագրի հանդես է գալիս Ծառայության Արաբկիրի տարածքային բաժնի պետ **ԱՍՅԱ ԱՇՈՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ**, ծնված՝ 21/11/1972թ.-ին, ՀԾՀ՝ 7111720067, Անձնագրային տվյալներ՝ AN0247051, տրված՝ 013-ի կողմից, 07/11/2012թ.-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԴԱՎԹԱՇԵՆ 4 ԹՂՄ., 21Շ, 48ԲՆ), այսուհետ՝ Վարձակալ, մյուս կողմից,

Կնքեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Կողմերիս միջև 13/03/2018թ. կնքված Երևան նոտարական տարածքի նոտար՝ Վերա Աբաջյանի կողմից գրանցամատյանի թիվ 748 համարով վավերացված վարձակալության պայմանագրի /վարձակալության իրավունքի գրանցման վկայական N 13122018-01-0005, տրվ. 13/12/2018թ./

2.1. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

,,Սույն պայմանագիրը կնքվում է մինչև 25/12/2021թ. /երկու հազար քսանմեկ թվականի դեկտեմբերի քսանհինգը/ ժամկետով:

3.1. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

"Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի ամսական վարձավճարը կազմում է 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումար, ներառյալ հարկերը":

2. Օբյեկտի նկատմամբ սահմանափակումներ գրանցված չեն համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից 12/12/2019թ. տրված թիվ 12122019-01-0337, գաղտնաբառ՝ OBW8EG25P5ZW միասնական տեղեկանքի:

3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից:

4. Համաձայնագրի կնքման հետ կապված ծախսերը կատարված է վարձատուի կողմից:

5. Սույն համաձայնագիրը կազմված և ստորագրված է չորս օրինակից, որոնցից մեկ օրինակը պահվում է Երևան նոտարական տարածքի նոտարական գրասենյակում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:
6. Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան ստորաբաժանումում 30 /երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում:

Ստորագրություններ

**,,ՀԱՅՋՐՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ,, ՓԲԸ**

լիազորված անձ ------------------------------------------------------------

**,,ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ,,**

լիազորված անձ------------------------------------------------------------

Երկու հազար տասնինը թվականի դեկտեմբերի քսանչորսին
Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Երևանի նոտարական տարածքի նոտար **ՎերաԱբաջյանիս** կողմից:
Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ, կողմերի ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորությունները ստուգված են:
Գրանցված է գրանցամատյանում 6863

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վերա Խաչիկի Աբաջյան

3339678

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 10 հունվարի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԿՄ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Արաբկիր Վ. Վաղարշյան փողոց 12 շենք, 1 տարածք

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր 13.03.2018թ h - 748, Համաձայնագիր 23/11/2018թ-ի N 4484, Համաձայնագիր 24.12.2019թ. թիվ 6863

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝
Մակերեսի չափը (հա)՝
Նպատակային նշանակությունը՝
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝
Գրանցված իրավունքի տեսակը՝

**ՎԿԱՅԱԿԱՆ N 10012020-01-0219, գաղտնաբառ՝ ND5IT7T5HIBC**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական
2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| 1 | 01-003-0118-0056-001-014 | Տարածք | 161.6 քմ | ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Պայմանագիրը գործում է մինչև 25.12.2021թ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Հրաչ Հովհաննիսյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 10012020-01-0219, գաղտնաբառ՝ ND5IT7T5HIBC**